



ԵՐԿՐԻՆԱԲԹԻ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Ա ԿՈՐՆԹԱՅԻՍ 10:1-4

ԿՈՒՂՈՍՇՏՈՒԹՆՆԵՆԷ ՀԵՌՈՒԻ

Մի՛ մոռնաք որ եգիպտոսէն ելլող մեր հայրերը բոլորն ալ անպի՛ն առաջնորդութեան եւ պահպանութեան տակ էին եւ բոլորն ալ Կարմիր ծովէն անցան, եւ Մովսէսի հետեւելով՝ բոլորն ալ մկրտուեցան անպի՛ն ու ծովուն մէջ: Բոլորն ալ նոյն հոգեւոր ուտելիքը կերան եւ բոլորն ալ նոյն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմեցին հոգեւոր ժայռէ մը՝ որ իրենց հետ կ'երթար: Եւ այդ ժայռը Քրիստոս ինքն էր: Բայց անոնց մեծագոյն մասը հաճելի չեղաւ Աստուծոյ, ուսիտ անոնց դիակները անապատին մէջ տարտղնուեցան: Այս բաները պատահեցան՝ իբրեւ օրինակ մեզի, որպէսզի չար բաներու չցանկանք, ինչպէս անոնք ցանկացին. եւ ոչ ալ կուռքեր պաշտենք, ինչպէս անոնցմէ ոմանք պաշտեցին: Զըլլայ նաեւ որ պոռնկութիւն ընենք, ինչպէս անոնցմէ ոմանք ըրին: Եւ չըլլայ որ Տէրը փորձենք, ինչպէս անոնցմէ ոմանք փորձեցին: Կամ չըլլայ որ տրտնջանք, ինչպէս անոնցմէ ոմանք տրտնջացին:

ՇԱՐԱԿԱՆ ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատէր Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՐԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աշ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ
✠
ԵԼԻՑ ԺԳ - ԺԴ ԳԼՈՒԽ
✠

ԲԱՂԱՐՋԱԿԵՐԱՑ ՏՕՆԸ (13:1-10)

Հերաբրքրական պատուեր մըն է որ Տէրը կու տայ Մովսէսին ըսելով. **«Սրբէ ինծի ամէն անդրանիկ, Իսրայէլի որդիներուն մէջ ամէն արգանդ բացողը, մարդ կամ անասուն: Ան իմս է»:** Նախ ամէն բանէ առաջ անդրադառնալու սրբել բային, որ կը նշանակէ մաքրել, զարել, յարկացնել, նուիրագործել: Երկրորդ, յարկանշական բացաբրութիւնը «ամէն արգանդ բացող»: Ընդհանրապէս կարելի է հարցնել, թէ արդեօք իսկապէս ո՛վ է առաջին արգանդ բացողը, եթէ ոչ ան որ գոցուածը բացաւ: Այս պարագային ծննդաբերութեամբ չէ որ արգանդ կը բացուի, այլ ամուսնութեամբ: Հերեւաբար, այս փրամաբանութեամբ, ուրեմն կը նշանակէ առաջին արգանդ բացողը եղաւ եթէ ոչ Յիսուս Քրիստոսը Ինք, երբ փակ արգանդը Մարիամի բացուեցաւ Քրիստոսի իսկ ծնունդով:

«Եւ իշուն ամէն անդրանիկը ոչխարով մը փրկես»: Հերաբրքրական մէկ այլ ուրիշ պատուեր մը, որ այս անգամ կապուած է անասունին՝ իշուն, որ կարելի է բառացի առնել որպէս պատուեր, բայց անոր մէջ կարելի է տեսնել նաեւ հոգեւոր իմաստը, երբ էշը նկարի առնուի որպէս անմաքուր կենդանի, գայն փոխարինել մաքուր կենդանիով: Իսկ գալով մարդու անդրանիկին, գայն փոխարինէ փրկագինով: Այս պատուերով Աստուած նախ կ'արգիլէր մարդկային գոհը, ինչ որ հեթանոս աշխարհը սովոր էր, միւս կողմէ նաեւ անով սորվեցնելու եւ դաստիարակելու, թէ մարդը խորքին մէջ ինքզինքն է որ պէտք է ընծայէ Աստուծոյ (Հռոմ 12:1), այս անգամ ոչ թէ արիւն թափել իմաստով, այլ՝ ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ ձեր անձերը ընծայեցէք Աստուծոյ գոհասեղանին, ձեր կապուածութիւնը, ձեր սէրը հանդէպ Աստուծոյ: Որովհետեւ իսկական փրկագինը արդէն վճարուեցաւ Քրիստոսով:

«Ասիկա քեզի նշանի համար պիտի ըլլայ ձեռքիդ վրայ ու քու աջքերուդ մէջքեղ յիշատակի համար, որպէսզի Տիրոջ օրէնքը քու բերնիդ մէջ ըլլայ. որովհետեւ Տէրը զօրաւոր ձեռքով քեզ հանեց Եգիպտոսէն»: Ըսել կ'ուզէ, որ այս պատուերը երբեք միտքեղ չհանես, միշտ յիշես, ու մանաւանդ այդ մասին ալ խօսիս, վկայես ու սորվեցնես:

ԱՄՊԻ ՄԻԲՆԸ ԵՒ ԿՐԱԿԻ ՄԻԲՆԸ (13:17-22)

Երբ ժամանակը հասաւ Եգիպտոսէն դուրս գալու, սկզբնական շրջանին անոնք ընտրեցին ծովեզերեայ ճամբան, որ պիտի տանէր զիրենք փղշարացիներուն երկիրը, բայց Աստուած թոյլ չտուաւ որ այդ ճամբան շարունակեն, հակառակ անոր որ այդ ճամբան շար աւելի կարճ ու մօտիկ էր, որպէսզի **«ըլլայ թէ ժողովուրդը զոջայ, երբ պատերազմ տեսնէ ու Եգիպտոս դառնայ»:** Յաճախ նաեւ մեր վիճակը երբ դուրս կու գանք մեր դժուարութիւններէն, «Եգիպտոսի լուծէն», կ'ուզենք կարճ ճամբան ընտրել, բայց նաեւ այդ կարճ ճամբան կրնայ մէկ այլ ուրիշ դժուարութիւններու դուր բանալ, որուն չդիմանալով կրնանք վերադարձ ընել դէպի «Եգիպտոս»: Միւս կողմէ, երկար ճամբան առիթ պիտի տայ առաւել եւս վստահելու ու ապահովելու Աստուծոյ: Այս բոլորէն անկախ, **«Տէրը անոնց առջեւէն կ'երթար ցորեկը ամպի սիւնով՝ անոնց ճամբայ ցուցնելու համար ու գիշերը կրակի սիւնով՝ անոնց լոյս տալու, որպէսզի ցորեկ ու գիշեր երթան, ու երբեք անոնց առջեւէն չպակսեցուց»:** Ասկէ առաջ ալ Տէրը անկէզ մորենիին ընդմէջէն խօսեցաւ եւ Ինքզինք յայտնեց Մովսէսին, իսկ հիմա ամպի ու կրակի սիւնով: Յայտնութիւններ, որոնք ձեռով մը ցոյց կու տան Աստուծոյ նկարագրին գիծերը, անով մարդը որոշ պատկերացում մը ունենալու համար: Այս նոյն յայտնութեան արտայայտութեան մասին կ'անդրադառնայ նաեւ Պօղոս Առաքեալ ըսելով. **«Եգիպտոսէն ելող մեր հայրերը բոլորն ալ ամպին առաջնորդութեան եւ պահպանութեան տակ էին եւ բոլորն ալ Կարմիր ծովէն անցան, եւ Մովսէսի հետեւելով՝ բոլորն ալ մկրտուեցան ամպին ու ծովուն մէջ: Բոլորն ալ նոյն հոգեւոր ուրելիքը կերան եւ բոլորն ալ նոյն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմեցին հոգեւոր ժայռէ մը՝ որ իրենց հետ կ'երթար. եւ այդ ժայռը Քրիստոս ինքն էր» (Ա Կորնթ 10:1-4):**

Ահա Աստուած զիրենք Կարմիր ծովուն անապատին ճամբայէն պտտուց: Այնպէս ինչպէս Իսրայէլի ժողովուրդը Կարմիր ծովէն անցաւ, անով դուրս գալու Եգիպտոսի սարկութենէն, նոյնպէս ալ քրիստոսնեաները մկրտութեան աւագանին մէջէն կ'անցնին մեղքի սարկութենէն դուրս գալու համար, որուն ջուրերը եւս կարմիր են Քրիստոսի արեամբ ներկուած: